

ՍԱՂՄՈՍ 8

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՉ փառքը և մարդու արժանապատվությունը <u>MT նախաբան</u> «Դավթի սաղմոսը . գլխավոր երաժշտին . զիթիթի վրա»	ՏԻՐՈՉԸ փառքը ստեղծագործության մեջ	Աստծո փառքը և մարդկային էակներին աստվածատուր արժանապատվությունը մեծարող օրհներգ	Աստծո փառքը և մարդկային արժանապատվությունը	Աստծո անվան իշխանություն
8:1-2	8:1	8:1ա 8:1բ-2	8:1-2	8:1ա 8:1բ-2
8:3-8	8:2 8:3-5	8:3-4 8:5-8	8:3-4 8:5-8	8:3-4 8:5-6
8:9	8:6-8 8:9	8:9	8:9	8:7-8 8:9

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 8:1-2
¹Ո՛վ ՏԵՐ, մեր ՏԵՐ, ի՛նչ գերազանց է Քո անունը ամբողջ երկրի վրա, Որ Քո փառքը երկինքներից վեր հաստատեցիր:
²Մանուկների ու ծծկեր երեխաների բերանով զորություն սահմանեցիր՝ Քո թշնամիների պատճառով,

Որ լռեցնես թշնամուն և վրիժառուին:

8:1 «Ո՛վ ՏԵՐ, մեր ՏԵՐ» Սա համադրություն է՝

1. ՅԱՀՎԵ – Աստծո (տես՝ Հատուկ Թեմա. Աստծո անունները) համար ուխտի անունը (BDB 217):
2. *Adon* – տերմինը (BDB 10) նշանակում է «սեփականատեր», «ամուսին», «տեր»: Այստեղ ՀՈԳՆԱԿԻ թվով է: Սաղմոսներում մնացած տեղերում այս տիտղոսը կիրառված է ԵԶԱԿԻ թվով (տես՝ Սաղմ. 45:12, 57:5, 105:21, 110:1, 114:7, բացի Սաղմ. 136:3, որտեղ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ «ՏԵՐ ՏԵՐԵՐԻ» է կիրառված: Հետևաբար սա պետք է որ լինի օրինակ «ՄԵԾԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻ»):

Այս տերմիններն այստեղ միասին են կիրառվում մեկ Աստծո համար, սակայն Սաղմ. 110:1-ում առանձին են կիրառված՝ ՅԱՀՎԵԻ ու Նրա Մեսիայի համար (տես՝ Մատթ. 22:44, Մարկ. 12:36, Ղուկ. 20:42, 43, Գործք 2:34, 35, Եբր. 1:13):

Նաև ուշադրություն դարձրեք, որ անգլերեն թարգմանություններում այս երկու տերմինները առանձնանում են իրենց մեծատառ գրությամբ:

ՅԱՀՎԵ = ՏԵՐ

Ադոն = Տեր

NASB, NRSV,

NJB, JPSOA

NKJV

TEV

REB

NET Աստվածաշունչ

«մեծափառ»

«գերազանց»

«մեծություն»

«փառավոր»

«փառահեղ»

Այս եբրայերեն ԱԾԱԿԱՆԸ (BDB 12) կիրառվում է առարկաների, մարդկանց և Աստծո համար: Եբր կիրառվում է Աստծո համար, այն փորձում է նկարագրել Նրա անքննելի մեծությունը (տես՝ Սաղմ. 76:4, 93:4):

ԳՈՅԱԿԱՆ տեսակը (ոչ ԲԱՅ) սովորաբար կիրառվում է հագուստի համար:

1. Եսավի մագերը մագոտ թիկնոցի պես էին – Ծննդ. 25:25
2. թանկարժեք թիկնոցը, որ Աքարը գողացել էր Երիքովից – Հեսու 7:21,24
3. Եղիայի թիկնոցը (ՅԱՀՎԵԻ կարողության խորհրդանիշը) – 3 Թագ. 19:13, 19, 4 Թագ. 2:8,13,14
4. մարգարեի մագոտ թիկնոցը (իր մարգարեական պաշտոնի խորհրդանիշը) – Չաք. 13:4

Նաև կարող է նշանակել՝

1. փառք – Չաք. 11:3
2. ազնիվ – Եզեկ. 17:8

Այս արտահայտությունը հնարավոր է կապված է ենթակայով (Աստծո տեղը ստեղծագործության մեջ) և «մեծափառություն» ԳՈՅԱԿԱՆՈՎ (հագուստի) Եսայի 6:1-4-ից:

❖ **«անուն»** Սա վերաբերում է հենց ՅԱՀՎԵԻՆ: Տես՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵ անունը:

❖ **«ամբողջ երկրի վրա»** Սա վերաբերում է ամբողջ ստեղծագործությանը (տես՝ Սաղմոս 104, տես՝ Հատուկ Թեմա. Հող, երկիր, երկրագունդ): ՅԱՀՎԵՆ միակ ճշմարիտ արարիչ, փրկիչ Աստվածն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ):

❖ **«որ Քո փառքը երկինքներից վեր հաստատեցիր»** Այս արտահայտության եբրայերեն տեքստի հետ կապված մի քանի հարցեր կան:

1. MT տարբերակը տալիս է «տալ» ԲԱՅԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ձևը (BDB 678, KB 733, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), «դրեցիր Քո փառքը երկինքներից վեր» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ):
2. UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 169, տես՝ NIV) փոխում է այն միևնույն ԲԱՅԻ ԱՆՈՐՈՇՈՎ «Դու քո փառքը երկինքներից վեր ես դրել» (UBS -ը այս փոփոխությունը գնահատում է «D», այսինքն՝ «խիստ կասկածելի»):
3. NET Աստվածաշունչը այստեղ թարգմանել է ՎԱՂԱԿԱՏԱՐ կամ ԱՆԿԱՏԱՐ ձևով, «Դու, որ դրել ես Քո փառքը երկինքներից վեր» (էջ՝ 857):
4. Խարիսի Աստվածաշունչը (հատոր 16, էջ՝ 45) ներկայացնում է այն որպես «Ես կմեծարեմ Քո վեհափառությունը երկինքներից վեր», կապելով ԲԱՅԸ Ուգարիտիկ գործածման հետ:
5. UBS Սաղմոսների Ձեռնարկը (էջ՝ 78-79, տես՝ REB) փոխարինում է այն «պատմել» կամ «փառաբանել, մեծարել» խոսքով՝ «որի փառքը պատմվում/մեծարվում է երկինքներից վեր» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔՆԵՐ):

Պարզապես մի անձնական գրառում. Ես սիրում եմ այս Սաղմոսը և «Քո անվան Մեծությունն ու Փառքը» երգը: Ես Աստծո ներկայությունը հրաշալի կերպով զգում եմ, երբ մտածում եմ մեր Աստծո անքննելի մեծության մասին այս խոսքի շուրջ: Ես չեմ ուզում ակադեմիական որևէ հարց մեզ հեռացնի այս երկրպագությանը լի պատգամից: Սակայն միևնույն ժամանակ, ես ուզում եմ ներշնչված հեղինակի պատգամին մնալ հավատարիմ: Թող Աստծո Հոգին օգնի մեզ ճանաչել Նրան, քարոզել Նրան, և ապրել Նրա ներկայության լույսի մեջ:

- ❖ **«Երկինքներից վեր»** Սա կարելի է մի քանի կերպ հասկանալ՝
1. ամբողջ համարը մեծարում է ստեղծագործության Աստծուն
 2. Աստծո փառաբանությունները բարձրանում են երկինքներից վեր
 3. ստեղծագործությունը պատմում/հայտնում է իր Արարչի փառքը/վեհափառությունը (այսինքն՝ գիշերվա երկինքը, Սաղմ. 8:3):

Տես Հատուկ Թեմա. «Երկինք» և «Երկինքները և Երրորդ Երկինքը»:

8:2 «Մանուկների և ծծկեր երեխաների բերանով» Սա ակնհայտ չափազանցություն է: Այս մանուկները չեն կարող խոսել, սակայն հենց իսկ նրանց ներկայությունը ցույց է տալիս Աստծո և Իր ստեղծագործության փառքն ու մեծությունը: Սա Սաղմ. 19:1-6-ի բնական հայտնությունն է: Այս ստեղծագործության արարծների միջոցով է հայտնի Աստված (տես՝ Հռոմ. 1:19-20, 2:14-16):

NASB, JPSOA	«Դու գորություն հաստատեցիր»
NKJV	«Դու գորություն սահմանեցիր»
NRSV, REB	«Դու պատվար հիմնեցիր»
NJB	«Դու նրան ամրոց սարքեցիր»

ԲԱՅԸ (BDB 413, KB 417, *Piel* ԿԱՏԱՐՅԱԼ, տես՝ Սաղմ. 89:11, *Qal* ԿԱՏԱՐՅԱԼ) նշանակում է «հաստատել» (NASB, «նշանակել», տես՝ 1 Մնաց. 9:22) կամ «հիմնել» (տես՝ Հեսու 6:26, 3 Թագ. 16:34, Եզրաս 3:10, Եսայի 14:32, 28:16):

«Չորություն» բառը (BDB 738) սովորաբար նշանակում է «գորություն, ուժ», սակայն այս համատեքստում այն վերաբերում է «պաշտպանության ամրոցի»:

«Ծծկեր երեխաների» (BDB 413) և «հաստատել» (BDB 413) տերմինների միջև գոյություն ունի մի բառախաղ: ՅԱՀՎԵՆ՝ Արարիչը, հայտնվում է երկինքներում և փոքրիկների մեջ: Ամբողջ Արարչագործությունը բղավում է Նրա փառքը և նպատակը:

Այս համարի ճշգրիտ նշանակությունը անհայտ է, սակայն ըստ երևույթին փոքրիկները, ովքեր հայտնում են Աստծու վեհությունը, հարձակման տակ են և Աստված պաշտպանում ու պահում է նրանց, ինչպես որ Նա անում է բոլոր նրանց համար, ովքեր հայտնում են Իր ճշմարտությունները:

8:2բ Ուշադրություն դարձրե՛ք այն ԱԾԱԿԱՆՆԵՐԻՆ, որոնք նկարագրում են չար հակառակորդներին.

1. ախոյաններ – BDB 865 II, KB 1058, *Qal* ԱԾԱԿԱՆ
2. թշնամի – BDB 33, KB 38, *Qal* ԱԾԱԿԱՆ
3. վրիժառու – BDB 667, KB 721, *Hithpael* ԱԾԱԿԱՆ

Սաղմոսերգուի հակառակորդների անունների շուրջ ամբողջական գրառման համար տե՛ս Սաղմոս 1:5 և 5:10:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 8:3-8

³Երբ տեսնում եմ երկինքը՝ Քո մատների գործը՝
Լուսինն ու աստղերը, որ Դու հաստատեցիր,
⁴Մարդն ի՞նչ է, որ նրան հիշում ես,
Կամ՝ մարդու որդին, որ այցելում ես նրան:
⁵Քանի որ նրան փոքր-ինչ ցած արիր, քան հրեշտակներին,
Եվ փառքով ու պատվով պսակեցիր նրան:
⁶Քո ձեռքերի գործերի վրա իշխանություն տվեցիր նրան,
Ամեն *ինչ* դրեցիր նրա ոտքերի տակ՝
⁷Բոլոր ոչխարներն ու արջառները,
Նաև՝ վայրի գազանները.
⁸Երկնքի թռչուններն ու ծովի ձկները,
Եվ *ինչ-որ* անցնում է ծովային ճանապարհներով:

8:3 Այս համարը մարդկանց զարմանքն է արտահայտում, երբ նայում են գիշերվա երկնքին: ՀՄԱ-ում շատերի համար այն եղել է նախապաշարմունքի և վախի աղբյուր: Սակայն իսրայելացիների համար այն ՅԱՀՎԵԻ առագաստն էր (տես՝ Ծննդ. 1:14-19):

«Սահմանեց» ԲԱՅԸ (BDB 465, KB 464, *Polel* ԿԱՏԱՐՅԱԼ) նաև գործածվում է Աստծո ստեղծագործության համար՝ Սաղմ. 24:2, 119:90: Հաջորդ համարը կենտրոնանում է Աստծո կողմից մարդկությանը արարելու վրա (տես՝ 2 Օր. 32:6): Ստեղծագործությունը, գեղեցիկ ստեղծագործությունը, ուներ նպատակ՝ Աստծո և մարդու համար հաղորդակցվելու բեմահարթակ (տես՝ ամբողջական գրառումը Սաղմ. 2:8-ում): Աստվածաշնչում Ծննդոց 3 և Հայտնություն 20-ի միջև ընկած ամեն ինչ Եղեմում կորցրած փոխհարաբերության վերականգնումն է Աստծո կողմից: Պատահական չէ, որ Ծննդոց 1-2 և Հայտնություն 21-22 իրար զուգահեռներ են:

❖ «**Քո մատների գործը**» Սա մարդաբանական լեզու է: Տես Հատուկ Թեմա. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՄ ՄԱՐԴ (ԱՆՏՐՈՊՈՍՈՐՖԻԶՄ):

Ես խորհուրդ եմ տալիս, որ կարդաք Ջոն Հ. Ուոլթնի *ՀՄԱ մտածելակերպը և ՀԿ-ը*, գլուխ 7, «Տիեզերական աշխարհագրություն», էջ՝ 165-178, որպես արդի ընթերցողին կենտրոնացնելու ՀՄԱ-ի աշխարհընկալման վրա, որը մեծապես տարբերվում է մեր աշխարհընկալումից:

Արևի և լուսնի պաշտամունքները տարածված էին ՀՄԱ-ում: Ծննդոց 1-ը բաբելոնյան աստղային պաշտամունքի հարցում վիճելի է, ինչպես Եգիպտոսի պատուհասներն էին վիճելի Եգիպտոսի բնության աստվածների հարցում:

Աստված է ստեղծել երկնային մարմինները (տես՝ Ծննդ. 1:14-19) և Նա էլ վերահսկում է:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼՈՒՄՆԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ
SPECIAL TOPIC: MOON WORSHIP**

Դեռևս սկսած *Շումերից* (մեզ հայտնի ամենահին քաղաքակրթությունը) լուսնի պաշտամունքը եղել է Հնագույն Մերձավոր Արևելքի ամենամեծ տարածում գտած դիցաբանությունը: Այս առասպելն ուներ թե՛ արական և թե՛ իգական կերպար: Սկզբնապես լուսնի աստվածը ծնվել է

ցորենի աստվածուհու՝ Նինիլից, որին բռնաբարել էր *Էնիլը*՝ երկնքի աստվածը: *Էնիլը* վտարվում է պանթեոնից և իր արարքի համար դատապարտվում սանդարամետին, սակայն երբ *Նինիլը* հայտնաբերում է, որ ինքը հղի է, միանում է նրան: Երեխային՝ *Սինին* (կամ *Չին*) թույլատրվեց, որ ամեն գիշեր բարձրանա երկինք:

Լուսնի երկրպագությունը տեղի է ունենում լուսնի տարբեր փուլերի ժամանակ՝

1. նորալուսին – *Asimbabbar*
2. կիսալուսին – *Sin*
3. լիալուսին – *Nanaa* (Շումերական «լուսավորությունը» *En-su*-ից՝ «իմաստության տիրոջից»)

Այս անունները հիմնականում նշանակում են «իմաստուն տեր» (այսինքն՝ *Suen*) կամ «լուսավորում» (*Nanaa*), որոնց երկրպագում էին Քաղղեսացիների Ուր քաղաքում: Քաղաքն ինքնին հաճախ անվանում էին Նաննարի քաղաք: Պտղաբերության գույգին երկրպագում էին զիգուրատներում (հարթ գագաթներով հսկա բուրգեր), որոնք գտնվում էին քաղաքի մեջ: Արևի աստվածը (*Shamash*) գույգի առաջնեկն էր, իսկ հետո *Ereshkigal* (սանդարամետի Թագուհին) և *Nanna* աստվածուհին (երկնքի Թագուհին):

Այս պաշտամունքը տարածվել էր ամբողջ Հնագույն Մերձավոր Արևելքով (ՀՄԱ), սակայն երկրպագության կենտրոններ էին հանդիսանում հետևյալ քաղաքները՝

1. Ուր
2. Խառան
3. Թեմա
4. Քանան
5. Մեքքա

Իրականում այս դիցաբանությունը համադրում է պտղաբերությունը աստղերի պաշտամունքի հետ:

ՀԿ-ը մերժում է աստղերի (տես՝ 2 Օրինաց 4:19, 17:3, 4 Թագ. 21:3,5, 23:5, Երեմ. 8:2, 19:13, Սոփ. 1:5) և պտղաբերության երկրպագությունը (այսինքն՝ Բահադի և Աստարովթի, Ուգարտական պոեմներում): Եբրայեցիները՝ բնիկ քոչվորները, շատ զգույշ էին լուսնի երկրպագությանը դիմադրելու հարցում, քանի որ ընդհանրապես լուսնի պաշտամունքը հատկանշական էր քոչվոր ցեղերին, ովքեր ճամփորդում էին գիշերով, մինչ արևին ավելի շատ երկրպագում էին նստակյաց կյանքով ապրող կամ գյուղատնտեսությամբ զբաղվող ժողովուրդները: Ի վերջո քոչվոր ազգերը ունեցան իրենց հանգրվանները և ապա աստղերի պաշտամունքը հիմնականում դարձավ խնդիր:

8:4 Ուշադրություն դարձրեք իրար հոմանիշ զուգահեռներին, որոնք առկա են պոեզիայի երկու տողերի և հատկապես «մարդու» (BDB 60, *enosh*, տես՝ Սաղմ. 9:20, նաև տես՝ Սաղմ. 103:14) և «մարդու որդու» (BDB 119 ԿԱՌՈՒՑՎԱԾԶԸ BDB 9, «մարդու որդի» “*ben Adam*”, տես՝ Սաղմ. 144:3) միջև:

Առաջին տերմինը՝ *enosh*, ունի երկու իմաստ՝

1. BDB 60 I - թույլ, հիվանդ, հյուծված (Եբրայերեն ԲԱՅԻՑ. *Niphal*, 2 Թագ. 12:15, *Qal* ԿԲԱՎՈՐԱԿԱՆ, Ես. 17:11, Երեմ. 15:18, 17:9):
2. BDB 60 II - մարդկությունը, այստեղ կիրառված է առանց թույլի նշանակության, դեռ հակառակը:

Երկրորդ տերմինը՝ արտահայտությունը, «մարդու որդի», եբրայերեն դարձվածք է մարդ անձի համար (այսինքն՝ Սաղմ. 146:3, Եզեկ. 2:1): ՅԱՀՎԵՆ հատուկ ուշադրություն է դարձնում Իր գլուխգործոցին՝ ստեղծված Իր պատկերով (տես՝ Ծննդ. 1:26-27), հաղորդակցության համար (տես՝ Ծննդ. 3:8): Մարդիկ կարևոր արարածներ են, բացառիկ կերպով Աստծո հետ կապված: Մենք այս ստեղծագործության մի մասն ենք կազմում, և այնուհանդերձ ավելին են քան ֆիզիկական էակ: Մեր ստեղծման օրից մենք հավիտենական, հոգևոր արարածներ ենք:

Մարդիկ ավելի բարձր հոգևոր կարգի պատկանող արարածներ են, քան հրեշտակները: Գիտեմ, որ ծիծաղելի է հնչում, բայց իմ հետ մտածեք:

1. ոչ մի հրեշտակի երբևէ չի ասվել, որ ստեղծված է Աստծո պատկերով և նմանությամբ (տես՝ Ծննդ. 1:26-27):
2. Հիսուս չմահացավ հրեշտակներին փրկելու համար (տես՝ Եբր. 2:14-16)
3. հավատացյալները դատելու են հրեշտակներին (տես՝ 1 Կորնթ. 6:3)
4. հրեշտակները մարդկանց ծառայելու համար են (տես՝ Եբր. 1:14)

Շումերական ստեղծագործությանը վերաբերող առասպելում և հետագայում Բաբելոնյան առասպելում, մարդիկ աղմկոտ, անհանգստացնող և մահկանացու են (տես՝ ներածություն, Ծննդոց 1-11-ի գրառումները), սակայն Աստվածաշնչում ճիշտ հակառակն է: Նրանք հանդիսանում են ՅԱՀՎԵԻ ստեղծագործության թիրախը՝ կենտրոնը:

NASB	«նրան հիշում ես»
NKJV, NRSV,	
JPSOA, REB,	
LXX	«անհանգստանում ես նրա մասին»
TEV	«մտածում ես նրանց մասին»
NJB	«նրանց համար միտք ես անում»

ԲԱՅԸ (BDB 269, KB 269, *Qal* ԱՆԿԱՏԱԲ) նշանակում է «հիշել»՝ «սիրով մտածելու» իմաստով (տես՝ Սաղմ. 9:12, 78:39, 98:3, 103:14, 105:8, 42, 106:45, 111:5, 115:12, 136:23): Սովորաբար Աստվածաշնչում Աստծուց խնդրվում է, որ «մոռանա» մարդու մեղքը և մարդկանցից՝ որ «հիշեն» Աստծուն, սակայն այստեղ սաղմոսերգուն ապշահար է ստեղծագործության անձայրածիր ու գեղեցիկ տեսարանով և այն մտքով որ այն Արարողը ժամանակ ու հոգատարություն է տրամադրում այս մի մոլորակի վրա ապրող Իր հատուկ ստեղծագործությանը: Սակայն, սա բանական՝ աստվածաբանական հարց է, այնպե՞ս չէ (այսինքն՝ նատուրալիզմը ի հակադրություն նպատակաուղղված արարչի):

8:5 Այս համարում պարզ երևում է մարդկանց արժեքն ու արժանապատվությունը: Մենք «ստեղծվել» ենք խոսքը ԲԱՅ Է (BDB 341, KB 338, *Piel* ԱՆԿԱՏԱԲ), որը նշանակում է միայն Աստծուց (*Elohim*) «պակաս գտնվել» կամ «նրանից ստորադաս ստեղծված լինել»: LXX թարգմանում է սա որպես «հրեշտակներ» (տես՝ Եբր. 2:7), սակայն Սաղմոս 8-ի համատեքստը պահանջում է «Աստված», քանի որ այս սաղմոսը արտացոլում է Աստծո ստեղծագործությունը Ծննդոցում: Չնայած որ հնարավոր է, որ Ծննդոց 1:26, 3:22, 11:7-ում «մեզ» ՀՈԳՆԱԿԻՆ արտացոլում է Աստծո երկնային խորհուրդը (տես՝ 3 Թագ. 22:19-23, Հոր 1:6, 2:1, Սաղմ. 82:1,6, 86:8, 89:6,8, Դան. 7:10), և հետևաբար վերաբերում է առաջնորդ հրեշտակներին (տես՝ Ծննդ. 3:5): Այդուհանդերձ, կարծում են, որ ըստ համատեքստի «Աստված» բառը լավագույնն է:

Ուշադրություն դարձրե՛ք, որ *enosh / ben Adam* պասկվում է՝

1. փառքով – BDB 458
2. պատվով - BDB 214

Մարդկությունը Աստծո ստեղծագործության գլուխգործոցն է: Նրանք ստեղծվել են Աստծո հետ փոխհարաբերվելու համար: Նրանք գործում են որպես Նրա կառավարիչները երկրի վրա (տես՝ Ծննդ. 1:28): Ամբողջ ֆիզիկական ստեղծագործությունը մի բեմ է Աստծո և մարդկության համար՝ հանդիպելու և միմյանց ճանաչելու համար (տես՝ Ծննդ. 3:8):

8:6-8 Ինչպես Սաղմ. 8:3-ը անկասկած ունի Ծննդոց 1-ի հետ կապ, այնպես էլ Սաղմ. 8:6-ը (տես՝ Ծննդ. 1:28): Մարդիկ Աստծո տնտեսներն էին Պարտեզում (և ըստ ենթադրության՝ ամբողջ արարչագործության): Մարդիկ իշխում են (BDB 605, KB 647, *Hiphil* ԱՆԿԱՏԱԲ), ենթարկում (BDB 461, KB 460, *Qal* ԱՆԿԱՏԱԲ, տես՝ Ծննդ. 1:28) և ունեն իշխանություն (BDB 921, KB 1190, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Ծննդ. 1:28) միայն Աստծո հետ ունեցած իրենց կապի դեպքում: Մենք տնտեսներ ենք:

8:6 «Քո ձեռքերի գործերը» Սա վերաբերում է Ծննդոց 1-ին (տես՝ Հոբ 14:15, Սաղմ. 92:4, 138:8, 143:5), ինչպես «Քո մատների գործը» Սաղմ. 8:3-ում (տես՝ Սաղմ. 102:25): Հետաքրքիր է, որ Ծննդոց 1-ում Աստծո ստեղծարար գործունեությունը տեղի է ունենում արտաբերված խոսքի միջոցով: Միայն մարդն է ստեղծվում՝ ձևավորվում Ծննդ. 2:7-ում անձնական ուշադրության միջոցով: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ԱՆՏՐՈՊՈՍՈՐՖԻԶՄ):

8:7 Այս արարածների ստեղծագործության հերթականությունը գուցա հեռ է Ծննդոց 1-ին: Այս Սաղմոսը (Սաղմոս 104-ի պես) պետք է ընթերցվի Ծննդոց 1-ի լույսի ներքո: Եթե Ծննդոց 1-2 լինեին Սաղմոսներում, մենք չէինք վիճարկի դրանց ժանրը կամ բառացիությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 8:9

ՊՎ ՏԵՐ, մեր ՏԵՐ, ինչ գերազանց է Քո անունն ամբողջ երկրի վրա:

8:9 Այս Սաղմոսը ավարտվում է այնպես, ինչպես որ սկսվում է (Սաղմ. 8:1բ): Աստվածաշնչի թեման և գլխավոր կերպարը Աստված է:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս են կապված «երկինքները» և «մանուկները»:
2. Արդյո՞ք ՅԱՀՎԵՆ ունի «մատներ»:
3. Ինչո՞ւ է աստվածաբանորեն կարևոր այն փաստը, որ ՅԱՀՎԵՆ է ստեղծել արևն ու լուսինը:
4. Ինչպե՞ս է «մարդը» Սաղմ. 8:4-ում կապված «մարդու որդու» հետ՝ Սաղմ. 8:4բ-ում:
5. Մարդը մի փոքր ցածր է հրեշտակներից, թե՞ Աստծուց: Ինչո՞ւ: